



Համարը N 226-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2024.02.19-  
2024.03.03 Պաշտոնական  
հրապարակման օրը 19.02.2024

Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 20.02.2024

Ընդունման ամսաթիվը 15.02.2024  
Ստորագրման ամսաթիվը 16.02.2024  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

**Ծանուցում**

Տես 3-րդ և 4-րդ կետերը:

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿԼԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2024 թվականի N 226-Ն

**ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿԼԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Մերմերի և տնկանյութի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

- Սահմանել՝
  - սերմերի հավաստագրման կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 1 հավելվածի.
  - տնկանյութի հավաստագրման ժամկետը, կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 2 հավելվածի.
  - Հայաստանի Հանրապետությունում պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի «Պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը հաստատելու մասին» N 1344-Ն և «Մերմերի հավաստագրման կարգը հաստատելու մասին» N 1479-Ն որոշումները:
- Սույն որոշման N 2 հավելվածն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ին N 1087-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունները (այսուհետ՝ փոփոխություններ) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:
- Սույն որոշման N 3 հավելվածով նախատեսված խաղողի, ծիրանենու, ազնվամորենու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում, հնդավորների, կորիզավորների, ընկուզավորների, հատապտղատուների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում, ընկուզավորների, չոր մեծարևադարձայինների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ն. Փաշինյան**

Երևան

16.02.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2024 թվականի

փետրվարի 15-ի N 226-Ն որոշման

**ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅՂ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետությունում սերմերի հավաստագրման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանվում է «Սերմերի և տնկանյութի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետությունում մշակաբույսերի սերմերի որակի գնահատման և շուկայահանման գործընթացներն ու ընթացակարգերը, և սահմանվում են այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը:

2. Հայաստանի Հանրապետությունում սերմերի հավաստագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) միջոցով:

**2. ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

3. Սերմերի հավաստագրման նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և շուկայահանվող սերմերի բարձր որակի (սորտային մաքրություն, սորտային պատկանելություն, ծլունակություն, հիվանդությունների ու վնասատուների հարուցիչներից զերծ, մոլախոտերով, այլ (չեզոք) նյութերով ցածր աղտոտվածություն) երաշխավորումը:

2) Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության արդյունավետության բարձրացումը:

3) մշակաբույսերի սերմերի հավաստագրման, սերմերի որակի գնահատման, շուկայահանման հետ կապված ընթացակարգերի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին:

4) բարձրորակ և միջազգային շուկայում մրցունակ սերմերի արտադրությանը նպաստելը և դրանով իսկ Հայաստանի Հանրապետությունում սերմեր արտադրող ու իրացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեության, ինչպես նաև սերմերի միջազգային շուկայում նրանց մասնակցությունն ապահովելու համար արդյունավետ պայմանների ստեղծումը:

4. Սերմերի հավաստագրման խնդիրներն են՝

1) պետության և սպառողների շահերի պաշտպանությունն անբարեխիղճ սերմ արտադրողներից ու իրացնողներից:

2) սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին սերմերի որակի համապատասխանության հավաստումը:

3) սերմերի արտադրության, պահպանության, իրացման և շուկայահանման գործընթացների նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության իրականացումը:

**3. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

1) *սերմերի խմբաքանակ*՝ ծագմամբ և որակով միատարր, մեկ սորտի և դասի սերմերի որոշակի քանակություն, որոնք ունեն որակը հավաստող միևնույն փաստաթուղթը:

2) *սերմերի խառը խմբաքանակ*՝ տարբեր տեղերից ստացված, միևնույն սորտի և դասի սերմերի խմբաքանակ: Սերմերի խառը խմբաքանակի բաղադրիչները կարող են լինել տարբեր բերքերից ստացված սերմեր, հավաստագրման

ներկայացված սերմերի խմբաքանակներ կամ դրանց համակցությունը.

3) *սերմերի խառնուրդ*՝ սերմերի խմբաքանակ, որը բաղկացած է սերմերի երկու և ավելի տեսակներից կամ սորտերից.

4) *սերմ արտադրող*՝ կազմակերպության կողմից հաշվառված իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իր կողմից օգտագործվող հողատարածքում իրականացնում է սերմերի բազմացման աշխատանքներ: Սերմ արտադրողը կարող է նաև վերամշակել, փաթեթավորել իր սեփական արտադրության սերմերը.

5) *փաթեթավորող*, վերամշակող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաթեթավորում, վերամշակում է հավաստագրված սերմերը.

6) *նմուշառու*՝ հավաստագրման ներկայացվող սերմերից նմուշներ վերցնելու համար կազմակերպության ներկայացուցիչ.

7) *դաշտային հետազոտող (ասպրոբատոր)*՝ սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարող.

8) *հայտատու*՝ սերմ արտադրող, որը դիմում է կազմակերպություն սերմերի հավաստագրման նպատակով.

9) *նախահիմնային (ՆՀՄ - PB) սերմեր*՝ բուծողի կամ լիցենզավորված անձի կողմից արտադրված, սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող, տվյալ սորտի առանձնահատկություններն ամբողջությամբ կրող սերմեր.

10) *հիմնային (սուպերէլիտային, էլիտային) (ՀՄ - BS) սերմեր (սուպերէլիտա, էլիտա)*՝ սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող նախահիմնային սերմերից ստացված սերմեր.

11) *հավաստագրված (ՀՄ - CS) սերմեր*՝ հիմնային սերմերից ստացված, սերմ արտադրողների կողմից արտադրված սերմեր, որոնց որակը համապատասխանում է սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին.

12) *առաջին սերնդի հավաստագրված (ՀՄ1 - C1) սերմեր*՝ հիմնային սերմերից ստացված սերմեր, որոնք նախատեսված են երկրորդ սերնդի հավաստագրված սերմերի (ՀՄ2 - C2) արտադրության կամ բերքի ստացման համար և համապատասխանում են սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին.

13) *երկրորդ սերնդի հավաստագրված (ՀՄ2 - C2) սերմեր*՝ հիմնային սերմերից կամ առաջին սերնդի հավաստագրված (ՀՄ1 - C1) սերմերից ստացված սերմեր, որոնք նախատեսված են արտադրական բերքի ստացման համար և համապատասխանում են սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին:

#### 4. ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՆԹԱՅԸ

6. Հավաստագրման պետք է ենթարկվեն օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում գրանցված բոլոր սորտերի կամ հիբրիդների սերմերը: Օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի և հիբրիդների ցանկում չգրանցված սորտերի կամ հիբրիդների սերմերը չեն կարող հավաստագրվել:

7. Հայաստանի Հանրապետությունում սերմերը հավաստագրվում են ըստ հետևյալ դասերի՝

1) նախահիմնային (օրիգինալ) սերմեր.

2) հիմնային սերմեր.

3) վերարտադրված սերմեր (առաջին և երկրորդ վերարտադրությունների, հիբրիդային առաջին և երկրորդ սերունդների սերմեր):

8I Հավաստագրվող սերմերի արտադրության համար օգտագործվող սերմերի խմբաքանակը ենթակա է հաշվառման կազմակերպության կողմից, որն իրականացվում է հավաստագրման գործընթացի իրականացման մասին հայտի հիման վրա:

9I Հավաստագրվող սերմերի արտադրության համար օգտագործվող սերմերի խմբաքանակից նմուշառման նպատակով հայտատուն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով սահմանված նմուշառման կարգի համաձայն լիազոր մարմին է ներկայացնում հայտ:

10I Սերմերի այն խմբաքանակներից, որոնք պահվել են հետագա տարիներին բազմացման համար, նոր նմուշներ չեն վերցվում: Նախորդ տարիներից պահված սերմերի իրացման դեպքում սերմերի նշված խմբաքանակները տվյալ պահին պետք է համապատասխանեն սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին: Հետագա տարիներին բազմացման համար պահպանված սերմերի հաշվառման և դրանց տնօրինման մասին գրանցումները կատարվում են սույն կարգին համապատասխան:

11I Հայտատուն սերմերի խմբաքանակի հավաստագրման գործընթացն անցկացնելու նպատակով սերմի արտադրության համար նախատեսված սերմերի ցանքից առնվազն մեկ ամիս առաջ լիազոր մարմին է ներկայացնում՝

1) մշակաբույսի սերմերի խմբաքանակի հավաստագրման գործընթաց անցկացնելու վերաբերյալ հայտ՝ համաձայն N 1 ձևի.

2) սերմնարտադրության նպատակով օգտագործվող սերմերի (որոնցից ստացվել է հավաստագրման ենթակա

սերմերի խմբաքանակը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված լաբորատորիաների կողմից իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքները.

- 3) սերմնարտադրության համար նախատեսված սերմերի ծագումն ու որակը հավաստող փաստաթուղթը.
- 4) առկայության դեպքում՝ տվյալ տրոտի սերմերի բազմացման բուծողի թույլտվությունը հավաստող փաստաթուղթ.
- 5) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը:

12| Լիազոր մարմինը հայտի ներկայացման պահին հաշվառում է հայտը:

13| Մշակաբույսի սերմերի խմբաքանակի հավաստագրման գործընթաց անցկացնելու վերաբերյալ հայտի հիման վրա լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին N 2 ձևին համապատասխան ծանուցում է հայտն ընդունելու կամ մերժելու մասին՝ միաժամանակ հայտն ընդունելու դեպքում տրամադրելով սերմերի խմբաքանակի հղման թիվը:

14| Լիազոր մարմինը մերժում է հայտը, եթե՝

1) սերմնարտադրության նպատակով օգտագործվող սերմերի լաբորատոր փորձաքննության արդյունքները չեն համապատասխանում համապատասխան դասի ցուցանիշներին.

2) չեն ներկայացվել սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը կամ ներկայացվել են թերի:

15. Նախահիմնային սերմերին հավաստագիր տրվում է սերմերի խմբաքանակից վերցված նմուշի փորձաքննության արդյունքների հիման վրա, իսկ հիմնային և վերարտադրված սերմերին՝ սերմերի խմբաքանակից վերցված նմուշի փորձաքննության և դաշտային հետազոտությունների արդյունքների հիման վրա:

16| Մշակաբույսի տեսակով պայմանավորված՝ հավաստագիրը գործում է մեկից մինչև երեք տարի ժամկետով:

**5. ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԶԵՎԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊԻՏԱԿՆԵՐԸ**

17. Սերմերի հավաստագրման նպատակով օգտագործվող ձևաթղթերը ներկայացված են համաձայն NN 1-7 ձևերի:

18. Բոլոր դասերի սերմերի պիտակները տրամադրում է կազմակերպությունը՝ N 7 ձևին համապատասխան ներկայացված հայտի հիման վրա: Պիտակների ձևաթղթերի համար հայտ են ներկայացնում սերմ արտադրողները:

19. Յուրաքանչյուր սերմնադաշտի կամ գրանցված սերմի խմբաքանակի համար լրացվում է առանձին ձևաթուղթ, որում հայտատուն նշում է պահանջվող պիտակների անհրաժեշտ թիվը՝ ըստ տրոտերի և սերմերի դասերի:

20. Սերմերի պիտակները հաշվառման ենթակա փաստաթղթեր են: Կազմակերպությունը հաշվառում է պատվիրված, ստացված և օգտագործված պիտակները, պահպանում տեղեկություններ պիտակներում նշվող բույսի տեսակի, տրոտի, սերմերի դասերի, պիտակների հերթական (սերիական) թվերի, ինչպես նաև պիտակների կորստի և փչացման մասին:

21. Պիտակների զգալի թվի կորստի կամ փչացման դեպքերում սերմ արտադրողները տեղեկացնում են կազմակերպությանը, իսկ յօգտագործված պիտակները վերադարձվում են կազմակերպության:

22. Սերմերի խմբաքանակի հղման թիվը կազմելու և պիտակները լրացնելու համար օգտագործվում են սերմերի հետևյալ դասերը, դասերի ծածկագրերն ու պիտակների գույները՝

Դասը	Ծածկագիրը	Պիտակի գույնը
Նախահիմնային	ՆՀՄ - PB	սպիտակ՝ անկյունագծով անցնող մանուշակագույն շերտով
Հիմնային	ՀՄ - BS	սպիտակ
Առաջին սերնդի հավաստագրված	ՀՄ1 - C1	կապույտ
Երկրորդ սերնդի հավաստագրված	ՀՄ2 - C2	կարմիր

23. Մինչև արտաքին պիտակների տրամադրումը՝ կազմակերպությունը դրանց վրա տպագրում է հետևյալ տեղեկությունները՝

- 1) արտադրման վայրը.
- 2) արտադրողի անվանումը.
- 2) բուսատեսակը.
- 3) տրոտը կամ հիբրիդը.
- 4) դասը.
- 5) հավաստագրի համարը.
- 6) խմբաքանակի հղման թիվը.
- 7) սերմերի տարայի կնքման (վերակնքման) տարեթիվը, ամիսն ու օրը.
- 8) բերքահավաքի տարին.
- 9) տարայում առկա սերմերի քաշը կամ քանակը.

10) տեղեկություն սերմերի քիմիական մշակման մասին:

24. Սերմերի յուրաքանչյուր տարայի համար տրամադրվում է 2 նույնական պիտակ՝ բացառությամբ կաշուն կամ չպատվող պիտակների, որոնց օգտագործման դեպքում չի պահանջվում ներքին պիտակ: Պիտակներից մեկը տեղադրվում է տարայի ներսում, իսկ մյուսն ամրացվում է տարայի արտաքին մակերեսին:

25. Նոր սորտի նախահիմնային սերմերի համար պիտակների ստացման մասին հայտի հետ միասին ներկայացվում է փաստաթուղթ, որով հաստատվում է սերմի տվյալ խմբաքանակի կապն այն սերմերի հետ, որոնք ներկայացվել են կազմակերպություն՝ տարբերիչ առանձնահատկության, միատարրության կայունության փորձարկումներ անցկացնելու համար: Եթե սորտը նոր չէ, ապա այդ փաստաթուղթը պետք է հավաստի սերմերի տվյալ խմբաքանակի ծագումը:

26. Հավաստագրման համար անհրաժեշտ ձևաթղթերն ու պիտակները հաշվառում, տրամադրում, չօգտագործված և վնասված ձևաթղթերն ու պիտակները դուրս է գրում ու ոչնչացնում կազմակերպությունը:

**7. ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ**

27. Հայտատուն պարտավոր է երաշխավորել, որ սերմնարտադրության համար նախատեսված մշակաբույսն աճեցվի նախորդի ճիշտ ընտրությամբ և մեկուսացման պահանջներին համապատասխանող դաշտերում:

28. Մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամաններով սահմանված հայտի ձևի և կարգի համաձայն:

29| Կազմակերպությունը բույսի կենսաբանական առանձնահատկությամբ պայմանավորված վեգետացիայի տարբեր փուլերում իրականացնում է սերմնադաշտերի ուսումնասիրություններ:

30. Սերմնադաշտերի դաշտային հետազոտություններն իրականացվում են լիազոր մարմնի կողմից հավաստագրված դաշտային հետազոտողները (ապրոբատորները)՝ հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա և սերմնադաշտերի դաշտային հետազոտության վերաբերյալ N 3 ձևին համապատասխան հաշվետվություն են ներկայացնում կազմակերպություն, ինչպես նաև ներկայացնում են սերմնադաշտի դաշտային հետազոտության արդյունքում կազմված ակտը՝ ձև N 4-ին համապատասխան:

31. Սերմնադաշտերի նույնականացումն ապահովելու նպատակով սերմ արտադրողը ցանքից հետո սերմերի յուրաքանչյուր խմբաքանակի համար ցուցանակ է տեղադրում սերմնադաշտի տեսանելի վայրում: Ցուցանակի վրա փակցվում է սերմերի տվյալ խմբաքանակի հղման թիվը՝ ապահովելով դրա անջրանցիկությունը: Սերմ արտադրողը մինչև բերքահավաքի ավարտը յուրաքանչյուր սերմնադաշտի համար ունենում է թղթապանակ (նշված սերմնադաշտի թիվը կամ անվանումը), որում պահվում է սերմերի յուրաքանչյուր խմբաքանակի համար առնվազն մեկ պիտակ: Պիտակները պետք է հասանելի լինեն դաշտային հետազոտողների համար:

32. Սերմ արտադրողը և (կամ) դաշտային հետազոտողը հավաստագրվող սերմերի արտադրության համար օգտագործվող սերմերի խմբաքանակի հաշվառման մասին տեղեկություններում անճշտությունների և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում անմիջապես տեղեկացնում է կազմակերպությանը:

33. Կազմակերպությունը սերմնադաշտերի հետազոտությունների ավարտից հետո ուսումնասիրում է դաշտային հետազոտությունների մասին հաշվետվությունները և հայտատուին տեղեկացնում սերմնադաշտի ընդունման կամ խոտանման մասին:

34. Հայտատուն մինչև դաշտային հետազոտությունների անցկացումը՝ հաշվառված սերմերը հավաստագրման չներկայացնելու որոշման մասին պետք է տեղեկացնի կազմակերպությանը, որի կողմից սերմերը հանվում են հաշվառումից:

35. Հայտատուն հավաստագրման համար նախատեսված սերմերը պահեստավորում է այլ սերմերից առանձին և պիտակավորում դրանք: Սերմերի տեղափոխման համար օգտագործվում են միայն նոր կամ լիարժեք մաքուր պարկեր:

36| Սերմերի տեղափոխման և վերամշակման ժամանակ պետք է պահպանվեն սերմերի սորտային պատկանելիությունն ու մաքրությունը:

37. Սերմ արտադրողը կարող է մինչև սորտի սերմերը կուտակել իր տնտեսությունում՝ իր հայեցողությամբ ու պատասխանատվությամբ և որպես մնացորդային քանակություն՝ հավաստագրման ներկայացնել հաջորդ տարի:

**8. ՄԱՔՐԱԾ (ԶՏԱԾ) ՍԵՐՄԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿՆՔՈՒՄԸ**

38. Սերմերի վերամշակման ընթացքում պետք է երաշխավորվի ըստ սորտերի և հիբրիդների բոլոր սերմերի լիարժեք և պատշաճ նույնականացումը: Եթե ստացված սերմերի տարբեր խմբաքանակները մինչև հավաստագրումը վերամշակվում են տարբեր եղանակներով, ապա յուրաքանչյուր խմբաքանակ դիտարկվում է որպես սերմերի առանձին խմբաքանակ, որը պետք է ունենա սերմերի խմբաքանակի առանձին հղման թիվ:

39. Հավաստագրման համար սերմերի յուրաքանչյուր խմբաքանակ պիտակավորվում և կնքվում է նմուշառուի կողմից:

40| Պիտակները լինում են՝

1) անցքով պիտակներ, որոնք ամրացնում են ձեռքի կապարակների միջոցով, և այս դեպքում պարկում դրվում են նաև ներքին պիտակներ:

2) պարկին մեկ կարով ամրացվող արտաքին և ներքին պիտակներ, որոնց օգտագործման դեպքում կնիք չի պահանջվում.

3) կաշուն պիտակներն ամրացվում են միայն թղթե կամ պլաստիկ պարկերին, փակցվում են պարկի վերնի մասում, կարվում են մեկ կարով կամ փակցվում են պարկի վրա և պարկի վերի կարը կնքվում է.

4) չպատրվող պիտակներ, որոնց օգտագործման դեպքում կնիք և (կամ) ներքին պիտակ չեն պահանջվում:

41. Սերմերը կարող են հավաստագրվել նաև մեծածավալ տարաներով: Այդ դեպքում կուտակված սերմերի մեծածավալ տարան այնպես է պիտակավորվում և կնքվում, որ անհնար լինի այն բացելը՝ առանց կնիքը խախտելու: Մեծածավալ տարայից նմուշառումը կարող է կատարվել մինչև դրա պիտակավորումը և կնքումը, եթե նմուշառուն տարողությունը պիտակավորում ու կնքում է նմուշ վերցնելուց անմիջապես հետո:

42| Օգտագործված պիտակները ենթակա չեն կրկնակի օգտագործման:

**9. ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

43. Սերմերի հավաստագրման մասին հայտը ներկայացվում է կազմակերպություն: Սերմերի հավաստագրման համար կարող է հայտ ներկայացնել գրանցված սերմ արտադրողը:

44. Սերմերի խմբաքանակի հավաստագրման համար հայտը ներկայացվում է համաձայն N 6 ձևի: Հայտատուն սերմերի հավաստագրման մասին հայտը ներկայացնելու հետ միաժամանակ ներկայացնում է N 5 ձևին համապատասխան՝ սերմերի նմուշառման և լաբորատոր փորձաքննության վերաբերյալ հայտ:

45| Սույն կարգի N 5 ձևի համաձայն հայտի ներկայացումից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպության կողմից իրականացվում է սերմերի նմուշառում և մշակաբույսի կենսաբանական առանձնահատկությամբ պայմանավորված՝ նորմատիվային փաստաթղթերով սահմանված ժամկետում՝ լաբորատոր փորձաքննություն:

46| Լիազոր մարմնի կողմից սերմնադաշտի դաշտային հետազոտության հաշվետվության, դաշտային հետազոտության ակտի, սերմերի լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է սերմերի տվյալ խմբաքանակի հավաստագիրը, եթե՝

1) կատարված լաբորատոր հետազոտությունների արդյունքում սերմնարտադրության նպատակով օգտագործված սերմերը (որոնցից ստացվել է հավաստագրման ենթակա սերմերի խմբաքանակը) հաստատվել են համապատասխան դասում.

2) դաշտային հետազոտողի ակտի համաձայն սերմնադաշտերը համապատասխանում են սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին.

3) ստացված սերմերի խմբաքանակից վերցված սերմերի նմուշը լաբորատոր փորձաքննության արդյունքների համաձայն համապատասխանում է սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին:

47. Սույն կարգի 46-րդ կետով սահմանված պահանջները չբավարարվելու դեպքում, հավաստագրի տրամադրումը մերժելու պարագայում, լիազոր մարմինը դրա մասին տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները, դրա մասին որոշման ընդունումից հետո երեք օրվա ընթացքում:

48| Կուտակված սերմերի մնացորդային քանակության հավաստագրումն իրականացվում է միևնույն ընթացակարգով:

**10. ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ**

49. Սերմերի խմբաքանակը վերագրանցվում է և վերապիտակավորվում, եթե այդ խմբաքանակը կրկնակի փորձաքննության է ենթարկվում:

50| Վերագրանցում պահանջվում է սերմերի հավաստագրման հետևյալ գործողությունների համար՝

1) վերանմուշառում և վերափորձաքննություն (ոչ էական անհամապատասխանություն ունեցող սերմերի խմբաքանակից կրկնակի նմուշառում և կրկնակի փորձաքննություն).

2) վերամաքրում (մաքրության հետ կապված թերությունների վերացում).

3) սերմերի խմբաքանակի դասի իջեցում:

51| Նշված երեք գործողությունները կարող են կատարվել միաժամանակ: Վերագրանցվող սերմերի խմբաքանակին տրվում է սերմերի խմբաքանակի հղման նոր թիվ՝ բացի լիարժեք վերափորձաքննությունից:

52. Վերափորձաքննության համար սերմերի խմբաքանակից վերցվում է նոր նմուշ, կատարվում լաբորատոր փորձաքննություն, որոնց համար լրացուցիչ վճարներ չեն պահանջվում:

53| Վերամաքրման համար սերմերի խմբաքանակից վերցվում է նոր նմուշ, կատարվում փորձաքննություն, որոնց համար պահանջվում են լրացուցիչ վճարներ:

54. Դասի իջեցման համար սերմերի խմբաքանակից նոր նմուշ չի վերցվում, փորձաքննություն չի կատարվում, և լրացուցիչ վճարներ չեն պահանջվում:

55. Բոլոր վերագրանցումների համար պահանջվում են առանձին հայտեր:

**11. ՎԵՐԱՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ**

56. Սերմերի տվյալ խմբաքանակից (առանց սերմերի խմբաքանակի հետագա վերամշակման) վերանմուշառում կատարելու համար հայտատուն ներկայացնում է հայտ՝ համաձայն N 5 ձևի՝ դրա վրա կատարելով «Վերանմուշառում» նշումը:

57. Եթե վերանմուշառման մասին հայտ է ներկայացվում սերմերի խմբաքանակի առանձին մասերի համար, ապա յուրաքանչյուր առանձին մասը վերապիտակավորվում և վերակնքվում է սերմի խմբաքանակի հղման նոր թվով:

58. Յուրաքանչյուր խմբաքանակի, ինչպես նաև առանձին մասերի բաժանված սերմերի խմբաքանակի յուրաքանչյուր մասի յուրաքանչյուր վերանմուշառման համար, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված նմուշառման կարգի համաձայն, լրացուցիչ հայտ է ներկայացվում կազմակերպություն՝ հայտի մեջ կատարելով «Վերանմուշառում» նշումը: Սերմերի ամբողջ խմբաքանակից վերանմուշառման դեպքում պահպանվում են սկզբնական պիտակներն ու սերմի խմբաքանակի հղման թիվը:

**12. ԽՈՏԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱՄԱՔՐՈՒՄԸ (ՎԵՐԱԶՏՈՒՄԸ)**

59. Սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին չբավարարելու պատճառով չհավաստագրված սերմերը վերամաքրման (վերագտման) դեպքում ենթակա են հավաստագրման և պիտակավորման որպես ամբողջովին նոր սերմերի խմբաքանակ և դրանց տրվում է սերմերի խմբաքանակի հղման նոր թիվ:

**13. ՍԵՐՄԵՐԻ ԴԱՍԵՐԻ ԻԶԵՑՈՒՄԸ**

60. Լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա սերմերի դասերը կարող են իջեցվել ավելի ցածր դասերի՝ հետևյալ կարգով՝

- 1) հիմնային սերմերի դասերը կարող են իջեցվել մինչև ՀՄ-1.
- 2) սերմերի ՀՄ-1 դասը կարող է իջեցվել մինչև ՀՄ-2 դասի:

61. Դասի իջեցման ենթակա սերմերի խմբաքանակի համար ներկայացվում է հավաստագրման նոր հայտ՝ սերմերի խմբաքանակի նոր հղման թվով: Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված հավաստագրի ձևում նշվում է սերմերի խմբաքանակի սկզբնական հղման թիվը, և կատարվում է «Դասի իջեցում» նշումը:

62. Նախահիմնային սերմերի դասն իջեցման ենթակա չէ:

**14. ՍԵՐՄԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ**

63. Եթե սերմերի խմբաքանակից նմուշ է վերցվել, և այն փորձաքննության է ենթարկվել նախքան սերմերի քիմիական մշակումը, ապա այդ սերմերի խմբաքանակի նկատմամբ առաջին անգամ կիրառված հղման թիվը սերմերի քիմիական մշակման ընթացքում չի փոխվում:

64| Լաբորատոր փորձաքննության նպատակով կատարված նմուշառումից հետո սերմերի քիմիական մշակման ենթարկվելու դեպքում դրա մասին տեղեկացվում է սերմերի գնորդը:

65. Եթե սերմերի խմբաքանակի տարբեր մասերը նախքան սերմերի հավաստագրումը քիմիական մշակման են ենթարկվել տարբեր եղանակներով, ապա յուրաքանչյուր առանձին մասը համարվում է սերմերի առանձին խմբաքանակ, որին տրվում է սերմերի խմբաքանակի հղման առանձին թիվ: Սերմերի քիմիական մշակումները համարվում են տարբեր, եթե դրանք կատարվում են տարբեր եղանակներով, և դրանց արդյունքում փոփոխվում է սերմերի ապրանքային նշանը:

**15. ՎԵՐԱՓՈԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ**

66. Պիտակավորված սերմերի վերափաթեթավորման բոլոր գործողություններն իրականացնում է հայտատուն: Նմուշառում գրառում է սկզբնական պիտակների վրա եղած տեղեկությունները:

67| Սերմերը կարող են վերափաթեթավորվել ցանկացած չափի տարաներում, որոնց վրա ամրացվում են նոր պիտակներ:

**16. ՍԵՐՄԵՐԻ ԽԱՌԸ ԽՄԲԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

68. Սերմ արտադրողն իր հայեցողությամբ կամ պատասխանատվությամբ կարող է խառնել միևնույն սորտի սերմերը և ստանալ սերմերի խառը խմբաքանակ: Եթե խառնվում են տարբեր դասերի սերմեր, ապա խառնուրդը դասակարգվում է ըստ ամենացածր դաս ունեցող բաղադրիչի դասի:

69. Սերմերի բոլոր խառը խմբաքանակներից կատարվում է վերանմուշառում, և դրանք ենթարկվում են

վերափորձաքննության:

70. Սերմ արտադրողների կողմից խառնման ենթակա սերմերի խմբաքանակների պիտակները հեռացվում և ոչնչացման ու դրանց թվերի գրանցման նպատակով վերադարձվում են կազմակերպություն: Սերմերի խառը խմբաքանակները պիտակավորվում են նոր պիտակներով և կազմակերպության կողմից դրանց տրվում է սերմի խմբաքանակի հղման նոր թիվ:

71. Սերմերի խառը խմբաքանակի ստացման ժամանակ դրա բաղադրիչ մասերը խառնվում են այնպես, որպեսզի ապահովվի խառնուրդի միատարրությունը:

72. Արգելվում է տարբեր եղանակներով քիմիական մշակման ենթարկված սերմերից խառը խմբաքանակի ստացումը:

**17. ՀԱՎԱՍՏԱԳՐՎՈՂ ՍԵՐՄԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԵՐՄԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԹԻՎԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՀՂՄԱՆ ԹԻՎԸ**

73. Հավաստագրվող սերմերի արտադրության նպատակով օգտագործվող սերմերի թվով նույնականացվում են սերմնադաշտը և արտադրվող սերմերը՝ նախքան դրանց վերամշակումը:

74| Հայաստանի Հանրապետության տարածքում հավաստագրվող սերմերի արտադրության նպատակով օգտագործվող սերմերի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ունենա իր եզակի նույնականացման թիվը:

75| Սերմերի նույնականացման թիվը բաղկացած է՝

- 1) բերքահավաքի տարեթվի վերջին թվանշանից.
- 2) հայտատուի հաշվառման թվից.
- 3) տրված հավաստագրի հերթական համարից:

76| Հայտատուն և կազմակերպությունը պարտադիր պահպանում են ձևի մեկական օրինակ:

77. Շուկայահանվող սերմերի խմբաքանակները կրում են սերմերի խմբաքանակի հղման եզակի թիվ:

Հավաստագրման ենթակա սերմերի խմբաքանակի հղման թիվը կազմվում է հետևյալ ձևով՝

- 1) բերքահավաքի տարեթվի վերջին թիվը.
- 2) սերմերի խմբաքանակի դասի ծածկագիրը.
- 3) վերամշակողի գրանցման թիվը.
- 4) տվյալ տարվա բերքահավաքից ստացված սերմերի խմբաքանակի հերթական թիվը:

78. Սերմերի խառը խմբաքանակի հղման թիվը ներառում է՝

- 1) սերմերի խառը խմբաքանակի հղման թվի սկզբում «Խ» տառը.
- 2) սերմերի խառը խմբաքանակի բոլոր բաղադրիչների բերքահավաքի տարին նույնը լինելու դեպքում՝ այդ տարեթվի վերջին թվանշանը, բերքահավաքների տարեթվերը տարբեր լինելու դեպքում՝ վերջին տարեթիվը.
- 3) տվյալ տարվա տարբեր բերքերից ստացված սերմեր խառնելու դեպքում՝ հավաստագրի հերթական համարը:

**Ձև N 1**

**Հ Ա Յ Տ Ն \_ \_**

**ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻ ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

Խնդրում եմ \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը) (տրոս, հիբրիդ)

\_\_\_\_\_ դասի սերմերի - - - - - տոննա խմբաքանակին տրամադրել հաշվառման համար և դրանցից ստացված \_\_\_\_\_ դասի սերմերի հավաստագրման գործընթաց անցկացնել:

Սերմնադաշտի գտնվելու վայրը \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

\_\_\_\_\_ հեկտար, նախորդ մշակաբույսը \_\_\_\_\_ :  
(մակերեսը)

Հայտատուն հավաստագրման գործընթաց սկսելու պարագայում պարտավորվում է կնքել պայմանագիր, ինչպես նաև հայտին կից ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, սահմանված կարգով և ամբողջ ծավալով կատարել հավաստագրում անցկացնելու հետ կապված բոլոր ծառայությունների (աշխատանքների) վճարումները:  
Հայտատուն հաստատում է, որ բերված ամբողջ տեղեկությունը ճիշտ է:

Հայտատու \_\_\_\_\_

(ստորագրություն)

Կ.Տ. \_\_\_\_\_

Լրացվում է «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակցի կողմից:

- 1. Հայտի գրանցման ամսաթիվ՝
- 2. Մուտքի ծածկագիրը՝
- 3. Փաստաթղթերի ստացականը կազմվել և հանձնվել է՝

օր    ամիս    տարի  
 «\_» \_\_\_\_\_ 20\_\_թ|  
 N \_\_\_\_\_  
 «\_» \_\_\_\_\_ 20\_\_թ|

Հավաստագրող մարմնի պատասխանատու \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև N 2

**ԾԱՆՈՒՑՈՒՄ N \_ \_**

**ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՐՄԻ (ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ) ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը որոշում է՝ \_\_\_\_\_  
(անցկացնել հավաստագրում կամ մերժել)

Տեղեկացվում է, որ Ձեր կողմից ներկայացված \_\_\_\_\_ հայտի հիման վրա \_\_\_\_\_  
(հայտի համարը) (մշակաբույսը, սորտ, հիբրիդ)

\_\_\_\_\_ դասի սերմերի \_\_\_\_\_ տոննա խմբաքանակի հաշվառման համարն է \_\_\_\_\_ :

Հավաստագրման գործընթացը մերժվում է\*՝

1. \_\_\_\_\_  
(որոշելու համար համապատասխանությունը (նորմատիվային փաստաթղթերի անվանումը) պահանջներին)

2. \_\_\_\_\_  
(ձևակերպել մերժման պատճառը)

\_\_\_\_\_ (ձևակերպել մերժման պատճառը)

Հավաստագրող մարմնի պատասխանատու \_\_\_\_\_  
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Ամսաթիվ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թվ

\*Լրացվում է մերժման դեպքում:

**Ձև N 3**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N \_\_**

**ՍԵՐՄՆԱԴԱՇՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Դաշտային հետազոտող \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

Տեղեկացվում է, որ \_\_\_\_\_  
(սերմնադաշտի գտնվելու վայրը մարզը, համայնքը)

\_\_\_\_\_ հեկտար \_\_\_\_\_  
(մակերեսը) (մշակարույսի անվանումը, սորտը, հիբրիդ)

\_\_\_\_\_ սերմնադաշտում իրականացվել է դաշտային հետազոտություն՝ բույսի  
(սերմնաբուծության հերթագայությունը)  
վեգետացիայի ընթացքում աճի և զարգացման \_\_\_\_\_ փուլ(եր)ում:

Սերմնադաշտի հակիրճ բնութագիրը \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Դաշտային հետազոտող՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ամսաթիվ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թվ

**Ձև N 4**

**Ա Կ Տ Ն N \_\_**

**ՍԵՐՄՆԱԴԱՇՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ**

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թվ  
օր ամիս տարի

Դաշտային հետազոտող \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը, վկայագրի N)

\_\_\_\_\_ ներկայությամբ կատարեց  
(հայտատուի անունը ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

\_\_\_\_\_ գտնվող

(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

\_\_\_\_\_ հեկտար սերմնադաշտում կատարված դաշտային հետազոտության:  
(մակերեսը)

**Դաշտային հետազոտության արդյունքները**

Մշակաբույսը	Սորտը	Ցանքի տարին	Սերմնաբուծության հերթագայությունը	Բերքատվությունը, ց/հա
1	2	3	4	5

Դաշտային հետազոտողի որոշումը և առաջարկությունները \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հայտատու \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Ապրոքատոր \_\_\_\_\_  
(ստորագրություն)

**Ձև N 5**

**Հ Ա Յ Տ Ն \_ \_**

**ՍԵՐՄԵՐԻ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

Խնդրում եմ \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը) (սորտ, հիբրիդ)

\_\_\_\_\_ դասի սերմերի - - - - - տոննա խմբաքանակից իրականացնել նմուշառում և լաբորատոր փորձաքննություն:

Հայտատու \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ. \_\_\_\_\_

*Լրացվում է «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակցի կողմից:*



Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ փոստի հասցե \_\_\_\_\_

Խնդրում է տրամադրել \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը, սորտը)

դասի սերմերի \_\_\_\_\_ N \_\_\_\_\_ խմբաքանակի  
\_\_\_\_\_ պիտակներ \_\_\_\_\_ համաձայն

պայմանագրի:

Հայտատու \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար**

**Ա. Հարությունյան**

16.02.2024  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված N 2**  
**ՀՀ կառավարության 2024 թվականի**  
**փետրվարի 15-ի N 226-Ն որոշման**

**ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ  
ՁԵՎԱԹՂԹԵՐԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի հավաստագրման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանվում է «Մերմերի և տնկանյութի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի տնկանյութի հավաստագրման ժամկետը, որակի գնահատման և շուկայահանման գործընթացներն ու ընթացակարգերը, և սահմանվում են այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը:

2. Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի հավաստագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) միջոցով:

**2. ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

3. Տնկանյութի հավաստագրման նպատակն է՝

- 1) պտղահատապտղատու մշակաբույսերի արտադրության ապահովումը սորտին բնորոշ կենսաբանական պոտենցիալով օժտված առողջ տնկանյութով.
- 2) սորտի արժեքավոր հատկությունների ու հատկանիշների պահպանությունը.
- 3) տնկանյութի միասնական վաճառքի, արտադրողների և մատակարարների կարողությունների զարգացման և պատասխանատվության բարձրացմանը նպաստելը և շուկայում մրցակցության ձևավորումը.

4) տնկանյութի արտադրությունը, վիճակագրական թեստավորումը, որակի վերահսկողությունը և տնկանյութի իրացումը սահմանված նորմատիվային փաստաթղթերին համապատասխան:

4. Տնկանյութի հավաստագրման խնդիրներն են՝

- 1) պետության և սպառողների շահերի պաշտպանությունն անբարեխիղճ տնկանյութ արտադրողներից ու իրացնողներից.
- 2) տնկարանային արտադրության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին տնկանյութի որակի համապատասխանության հավաստումը.
- 3) տնկանյութի արտադրության, պահպանության, իրացման և շուկայահանման գործընթացների նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության իրականացումը
- 4) պտղահատապտղատու մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, բուսասանիտարական վիճակի բարելավումը:

**3. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

- 1) ելակետային (նախահիմնային) տնկանյութ՝ մայր բույսերի ժառանգականության պահպանման ու հետագա բազմացման նպատակով ընտրասերման (սելեկցիոն) աշխատանքների արդյունքով ստացված սորտերի, նույնակների (կլոնների) մասեր կամ վիճակագրորեն ամբողջական բույսեր.
- 2) հիմնային (սուպերէլիտային, էլիտային) տնկանյութ՝ մայրտնիկի համար նախատեսված և ելակետային տնկանյութի հաջորդիվ բազմացման արդյունքով ստացված վիճակագրորեն ամբողջական բույսեր կամ սորտերի և նույնակների (կլոնների) մասեր.
- 3) հավաստագրված տնկանյութ՝ արտադրական այգեհիմնման համար նախատեսված և հիմնային տնկանյութի վեգետատիվ բազմացումից ստացված սորտի անփոփոխ ժառանգականությունը կրող առավել վարակածին վիճակագրորեն ստուգված ամբողջական բույսեր.
- 4) վերարտադրված տնկանյութ՝ բազմամյա բույսերի հավաստագրված տնկանյութի հաջորդիվ երեք սերունդներն ընդգրկող բուսաճային (վեգետատիվ) բազմացման միջոցով ստացված և վիճակագրորեն (առավել վարակածին հարուցիչներից) ստուգված ամբողջական բույսեր.
- 5) շարքային (սովորական) տնկանյութ՝ բազմամյա բույսերի հավաստագրված տնկանյութի չորրորդ և հաջորդիվ վերարտադրությունների վեգետատիվ բազմացման միջոցով ստացված, առողջացման և ստուգման չենթարկված ամբողջական բույսեր.
- 6) նմուշառու՝ հավաստագրման ներկայացվող սերմերից նմուշներ վերցնելու համար կազմակերպության ներկայացուցիչ.
- 7) դաշտային հետազոտող (ապրոբատոր)՝ տնկարանային տարածքների դաշտային հետազոտություններ կատարող.
- 8) հայտատու՝ տնկանյութի հավաստագրման նպատակով կազմակերպություն հայտ ներկայացրած տնկանյութ արտադրող.
- 9) տնկանյութ արտադրող՝ կազմակերպությունում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձ.
- 10) տնկարանային դաշտ՝ տնկանյութի աճեցման տարբեր փուլերի համար նախատեսված տնկարանի բաժնի բաղկացուցիչ մաս.
- 11) տնկանյութի խմբաքանակ՝ ծագմամբ, տարիքով և որակով միասարք, մեկ սորտի (տեսակի) և կարգի տնկանյութի որոշակի քանակություն, որոնք ունեն որակը հավաստող մինչև նույն փաստաթուղթ:

**4. ՏՆԿԱՆՑՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

6| Հավաստագրման պետք է ենթարկվեն օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում գրանցված բոլոր սորտերի կամ հիբրիդների տնկանյութերը: Օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի և հիբրիդների ցանկում չգրանցված սորտերի կամ հիբրիդների տնկանյութերը չեն կարող հավաստագրվել:

7| Մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է շուկայահանել (իրացնել) օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի և հիբրիդների ցանկում չգրանցված սորտի կամ հիբրիդի չհավաստագրված տնկանյութերը:

8| Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի պարտադիր հավաստագրումն իրականացվում է փուլ առ փուլ:

9| Հայաստանի Հանրապետությունում տնկարանային արտադրությամբ զբաղվող բոլոր տնկանյութ արտադրողների կողմից արտադրված տնկանյութերի համար պարտադիր հավաստագրման ժամկետ է սահմանվում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

10| Հայաստանի Հանրապետությունում տնկանյութը հավաստագրվում է ըստ հետևյալ կարգերի՝

- 1) ելակետային (նախահիմնային) տնկանյութ.
- 2) հիմնային (սուպերէլիտային, էլիտային) տնկանյութ.

- 3) հավաստագրված տնկանյութ.
- 4) վերարտադրված տնկանյութ.
- 5) շաքքային (սովորական) տնկանյութ:

11| Հավաստագրման նպատակով հայտատուն դաշտային հետազոտությունների մեկնարկից առնվազն մեկ ամիս առաջ տնկանյութի հավաստագրման նպատակով լիազոր մարմին է ներկայացնում՝

1) տնկանյութի խմբաքանակի հավաստագրման գործընթաց անցկացնելու վերաբերյալ հայտ՝ համաձայն N 1 ձևի.

2) տնկանյութի արտադրության համար նախատեսված հողի և բուսական նմուշների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստարմագրված լաբորատորիաների կողմից լաբորատոր հետազոտությունների՝ վիրուսներ փոխանցող նեմատոդների առկայության վերաբերյալ.

3) բազմացվող տնկանյութի ծագումն ու որակը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում).

4) առկայության դեպքում տվյալ տրոտի տնկանյութի բազմացման նպատակով բուծողի թույլտվությունը հավաստող փաստաթուղթ.

5) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը:

12| Լիազոր մարմինը հայտի ներկայացման պահին հաշվառում է հայտը:

13| Տնկանյութի խմբաքանակի հավաստագրման գործընթաց անցկացնելու վերաբերյալ հայտի հիման վրա լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին N 2 ձևին համապատասխան ծանուցում է հայտն ընդունելու կամ մերժելու մասին՝ միաժամանակ հայտն ընդունելու դեպքում տրամադրելով տնկանյութի խմբաքանակի հղման թիվը:

14| Լիազոր մարմինը մերժում է հայտը, եթե՝

1) տնկանյութի արտադրության համար նախատեսված հողի և բուսական նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները չեն համապատասխանում սահմանված կարգի տնկանյութի ցուցանիշներին.

2) չեն ներկայացվել սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը կամ ներկայացվել են թերի:

**5. ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԶԵՎԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊԻՏԱԿՆԵՐԸ**

15. Տնկանյութի հավաստագրման նպատակով օգտագործվող ձևաթղթերը ներկայացված են համաձայն NN 1-10 ձևերի:

16. Բոլոր կարգերի տնկանյութերի պիտակները տրամադրում է կազմակերպությունը՝ N 10 ձևին համապատասխան ներկայացված հայտի հիման վրա: Պիտակների ձեռքբերման համար հայտ են ներկայացնում տնկանյութ արտադրողները: Պիտակներն օգտագործվում են միայն տվյալ հայտատուի կողմից:

17. Յուրաքանչյուր տնկարանային դաշտի կամ հաշվառված տնկանյութի խմբաքանակի համար լրացվում է առանձին ձևաթուղթ, որում հայտատուն նշում է պահանջվող պիտակների անհրաժեշտ թիվը՝ ըստ արտերի, պատվաստակալների տեսակի և տնկանյութի կարգերի:

18. Տնկանյութի պիտակները հաշվառման ենթակա փաստաթղթեր են: Կազմակերպությունը հաշվառում է պատվիրված, ստացված և օգտագործված պիտակները, պահպանում տեղեկություններ պիտակներում նշվող բույսի տեսակի, տրոտի, պատվաստակալի տեսակի, տնկանյութի կարգի, պիտակների հերթական (սերիական) թվերի, ինչպես նաև պիտակների կորստի և փչացման մասին:

19. Տնկանյութ արտադրողները պիտակների զգալի թվի կորուստի կամ փչացման մասին տեղեկացնում են կազմակերպությանը, իսկ չօգտագործված պիտակները վերադարձվում են կազմակերպություն:

20. Տնկանյութի խմբաքանակի հղման թիվը կազմելու և պիտակները լրացնելու համար օգտագործվում են տնկանյութի հետևյալ կարգերը, կարգերի ծածկագրերը, ծածկագրերն ու պիտակների գույները՝

Կարգը	Ծածկագիրը	Պիտակի գույնը
Ելակետային (նախահիմնային)	ՆՀՄ-PB	Սպիտակ՝ անկյունագծով անցնող մանուշակագույն շերտով
Հիմնային (սուպերէլիտա, էլիտա)	ՀՄ-BS	Սպիտակ
Հավաստագրված	ՀՄ1-C1	Կապույտ
Վերարտադրված	ՀՄ2-C2	Կարմիր

21. Մինչև արտաքին պիտակների տրամադրումը՝ կազմակերպությունը դրանց վրա տպագրում է հետևյալ տեղեկությունները՝

- 1) արտադրման վայրը.
- 2) արտադրողի անվանումը.
- 3) բուսատեսակը.

- 4) սորտը.
- 5) պատվաստակալի տեսակը.
- 6) կարգը.
- 7) տնկանյութի տարիքը.
- 8) տնկանյութի քանակը.
- 9) խմբաքանակի հղման թիվը:

22. Տնկանյութի յուրաքանչյուր փաթեթավորման ցանցի կամ պարկի համար տրամադրվում է 2 նույնական պիտակ՝ բացառությամբ կաշուն կամ չպատռվող պիտակների, որոնց օգտագործման դեպքում չի պահանջվում ներքին պիտակ: Պիտակներից մեկը տեղադրվում է փաթեթավորման ցանցի կամ պարկի ներսում, իսկ մյուսն ամրացվում է արտաքին մակերեսին:

23. Հավաստագրման համար անհրաժեշտ ձևաթղթերն ու պիտակները հաշվառում, տրամադրում, չօգտագործված և վնասված ձևաթղթերն ու պիտակները դուրս է գրում ու ոչնչացնում կազմակերպությունը:

**6| ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԿԱՐԳԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

24| Բազմամյա բույսերի ելակետային (նախահիմնային) տնկանյութի մայրուտներում մինչև երկու տարվա ընթացքում թույլատրվում է մայրուտների ընդլայնումը և վերանորոգումը՝ բազմացվող տնկանյութի կարգի պահպանմամբ:

25| Սերմնաբույսի վրա սորտի պատվաստման արդյունքում ստացված տնկանյութին շնորհվում է պատվաստացուից ցածր կարգ (հիմնային պատվաստացու + պատվաստակալ սերմնաբույս = հավաստագրված տնկանյութ):

26| Վեգետատիվ ճանապարհով բազմացված պատվաստակալի վրա պատվաստված սորտին շնորհվում է պատվաստակալից ցածր կարգ (հիմնային պատվաստացու հիմնային + պատվաստակալ հավաստագրված = վերարտադրված տնկանյութ):

27| Հատապտղատու մշակաբույսերի արմատակալված կտրոններին և անդալիսներին, ինչպես նաև ելակենու բեղիկներին շնորհվում է բազմացված մայր բույսի կարգից ցածր կարգ:

**7| ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆԸ**

28. Հայտատուն պարտավոր է երաշխավորել տնկարանային դաշտերում ցանքաշրջանառությունը, մեկուսացման պահանջներն ու առավել վտանգավոր հիվանդություններից ու վնասատուներից զերծ լինելը:

29| Նորաստեղծ տնկարան հիմնելու դեպքում դաշտային հետազոտությունն իրականացվում է տնկարանի ստեղծման հաջորդ տարվանից՝ նախքան համապատասխան դաշտից տնկանյութի տեղափոխումը հաջորդ դաշտ, իսկ հատապտղային մշակաբույսերի մայրուտների արտադրության համար դաշտային հետազոտությունն անցկացվում է տնկման տարում:

30| Մշակաբույսերի տնկարանային դաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի հրամաններով սահմանված հայտի ձևի և կարգի համաձայն:

31. Տնկարանային տարածքների դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի հրամաններով սահմանված հայտի ձևի և կարգի համաձայն:

32| Կազմակերպությունը բույսի կենսաբանական առանձնահատկությամբ պայմանավորված վեգետացիայի տարբեր փուլերում իրականացնում է տնկարանային տարածքների ուսումնասիրություններ և դաշտային հետազոտությունների հիման վրա կազմում է տվյալ հայտի փորձարկման արդյունքների տեղեկանք՝ N 8 ձևին համապատասխան:

33. Տնկարանային տարածքների դաշտային հետազոտություններն իրականացնում են լիազոր մարմնի կողմից հավատարմագրված դաշտային հետազոտողները (ապրոբատորները)՝ հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա, և տնկարանային տարածքների դաշտային հետազոտության վերաբերյալ N 3 ձևին համապատասխան հաշվետվությունը դաշտային հետազոտողի կողմից ներկայացվում է կազմակերպություն, ինչպես նաև ներկայացվում է տնկարանային դաշտի դաշտային հետազոտության արդյունքում կազմված ակտը՝ մշակաբույսով պայմանավորված N 4 ձևին կամ N 5 ձևին համապատասխան:

34| Տնկարանային դաշտերում դաշտային հետազոտողների կողմից իրականացվում է նաև բուսասանիտարական դաշտային հետազոտություն՝ վնասատուներով, հիվանդություններով, մոլախոտերով վարակվածության աստիճանը գնահատելու, ինչպես նաև կարանտինային օրգանիզմների առկայությունը պարզելու համար և դաշտային հետազոտողի կողմից կազմակերպություն է ներկայացվում դաշտային հետազոտության բուսասանիտարական հսկողության տեղեկանքը՝ N 6 ձևին համապատասխան:

35| Կարանտինային օրգանիզմների հայտնաբերման դեպքում տնկարանային դաշտի դաշտային հետազոտություն չի իրականացվում:

36| Հիվանդությունների և վնասատուների բնակվածության ախտանշանների դեպքում դաշտային հետազոտողը կարող է հողի կամ բուսական օրգանիզմների նմուշներ ներկայացնել լաբորատոր փորձաքննության, որոնց համար նախատեսված վճարումները կատարվում են հայտատուի կողմից:

37| Տնկարանային դաշտերում առկա միննույն հողում վիրուս-փոխանցող նեմատոդների առկայության վերաբերյալ լաբորատոր փորձաքննությունն իրականացվում է երեք տարի պարբերականությամբ:

38. Տնկարանային դաշտերի նույնականացումն ապահովելու նպատակով տնկանյութ արտադրողը տնկումից հետո տնկանյութի յուրաքանչյուր խմբաքանակի համար ցուցանակ է տեղադրում տնկարանային դաշտի տեսանելի վայրում: Ցուցանակի վրա փակցվում է տնկանյութի տվյալ խմբաքանակի հղման թիվը՝ ապահովելով դրա անջրանցիկությունը: Տնկանյութ արտադրողը յուրաքանչյուր տնկարանային դաշտի համար ունենում է թղթապանակ (նշված տնկարանային դաշտի թիվը կամ անվանումը), որում պահվում է տնկանյութի յուրաքանչյուր խմբաքանակի համար առնվազն մեկ պիտակ: Պիտակները պետք է հասանելի լինեն դաշտային հետազոտողների համար:

39. Տնկանյութ արտադրողը և (կամ) դաշտային հետազոտողը հավաստագրվող տնկանյութի արտադրության համար օգտագործվող տնկանյութի խմբաքանակի հաշվառման մասին տեղեկություններում անճշտությունների և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում անմիջապես տեղեկացնում է կազմակերպությանը:

40. Կազմակերպությունը փորձարկման արդյունքների տեղեկանքի և տնկարանային դաշտերի հետազոտությունների ավարտից հետո ուսումնասիրում է դաշտային հետազոտությունների մասին հաշվետվությունները և հայտատուին տեղեկացնում տնկարանային դաշտի ընդունման կամ խոտանման մասին:

41. Հայտատուն մինչև դաշտային հետազոտությունների անցկացումը հաշվառված տնկանյութը հավաստագրման չներկայացնելու որոշման մասին պետք է տեղեկացնի կազմակերպությանը, որի կողմից տնկանյութի տվյալ խմբաքանակը հանվում է հաշվառումից:

**8| ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

42. Տնկանյութի հավաստագրման մասին հայտը ներկայացվում է կազմակերպություն՝ գրանցված տնկանյութ արտադրողի կողմից:

43. Տնկանյութի խմբաքանակի հավաստագրման համար հայտը ներկայացվում է համաձայն N 9 ձևի: Հայտատուն տնկանյութի հավաստագրման մասին հայտը ներկայացնելու հետ միաժամանակ ներկայացնում է N 7 ձևին համապատասխան տնկանյութի նմուշառման հայտը:

44| Սույն կարգի N 7 ձևի համաձայն հայտի ներկայացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպության կողմից իրականացվում է տնկանյութի նմուշառում, գնահատում և անհրաժեշտության դեպքում (վիրուսների առկայության ախտանշանների դեպքում)՝ լաբորատոր փորձաքննություն:

45| Լիազոր մարմնի կողմից տնկարանային դաշտի դաշտային հետազոտության հաշվետվության, դաշտային հետազոտության ակտի, բուսասանփտարական հսկողության տեղեկանքի, տվյալ հայտի փորձարկման արդյունքների տեղեկանքի հիման վրա տնկանյութի խմբաքանակի հավաստագրման համար հայտը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է սերմերի տվյալ խմբաքանակի հավաստագիրը, եթե՝

- 1) կատարված դաշտային հետազոտությունների և դաշտային հետազոտության բուսասանփտարական հսկողության արդյունքում տնկանյութը համապատասխանում է տնկարանային արտադրության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին.
- 2) տվյալ հայտի փորձարկման արդյունքներով հաստատվում է արտադրված տնկանյութի համապատասխանությունը տնկանյութի արտադրության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին:

46. Սույն կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները չբավարարվելու դեպքում, հավաստագրի տրամադրումը մերժելու պարագայում, լիազոր մարմինը դրա մասին տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները, դրա մասին որոշման ընդունումից հետո երեք օրվա ընթացքում:

**9| ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՓԱԹԵՓԱՎՈՐՈՒՄԸ, ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒՄԸ**

47| Տնկանյութը հողից հանելուց հետո մաքրում են հողից և փոշուց (բացառությամբ փակ արմատային համակարգով իրացվող բույսերի տնկանյութի), տեսակավորում են ըստ տեսակի, սորտի, պատվաստակալի տեսակի, տարիքի և չափերի, կազմում են կապոցներ, որոնք տեղավորում են օդաթափանց կտորե ցանցի կամ ծակոտկեն պոլիէթիլենային պարկերի մեջ:

48| Ջրազրկումից խուսափելու համար տնկիների արմատները փաթաթում են խոնավությունը լավ պահող նյութով, որը միաժամանակ կարող է կասեցնել միկրոօրգանիզմների կուտակումը և բակտերիալ հիվանդությունների զարգացումը:

49| Հավաստագրված տնկանյութի յուրաքանչյուր խմբաքանակ պիտակավորվում է անջրաթափանց և չպատմվող պիտակներով:

50| Պահպանման ժամանակ յուրաքանչյուր սորտի, կարգի խմբաքանակը պահեստավորվում է առանձին:

ՄՇԱԿԱԲՈՒՅՄԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

Խնդրում եմ \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը) (սորտ, պատվաստակալ)

\_\_\_\_\_ կարգի տնկանյութի \_\_\_\_\_ հաստ խմբաքանակին տրամադրել հղման

թիվ և դրանցից ստացված \_\_\_\_\_ կարգի տնկանյութի հավաստագրման գործընթաց անցկացնել:

Տնկարանային դաշտի գտնվելու վայրը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ հեկտար, նախորդ մշակաբույսը \_\_\_\_\_:  
(մակերեսը)

Հայտատուն հավաստագրման գործընթաց սկսելու պարագայում պարտավորվում է կնքել պայմանագիր, ինչպես նաև հայտին կից ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, սահմանված կարգով և ամբողջ ծավալով կատարել հավաստագրում անցկացնելու հետ կապված բոլոր ծառայությունների (աշխատանքների) վճարումները:

Հայտատուն հաստատում է, որ բերված ամբողջ տեղեկությունը ճիշտ է:

Հայտատու՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Կ.Տ. \_\_\_\_\_

Լրացվում է «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակցի կողմից:

1. Հայտի գրանցման ամսաթիվ՝
2. Մուտքի ծածկագիրը՝
3. Փաստաթղթերի ստացականը կազմվել և հանձնվել է՝

օր    ամիս    տարի

«\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|

N \_\_\_\_\_

«\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|

Հավաստագրող մարմնի պատասխանատու՝ \_\_\_\_\_  
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև N 2

ԾԱՆՈՒՑՈՒՄ N \_ \_

ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|

օր    ամիս    տարի

Քննարկելով \_\_\_\_\_ կողմից  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

«\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ| ներկայացված N \_ \_ հայտը, որով ներկայացվել է \_\_\_\_\_

(մշակաբույսի անվանումը)

կարգի \_\_\_\_\_ տնկանյութի, որը աճեցվում է  
(բուսաձևը (տրոտ), պատվաստակալ) (ծավալը, հատ)

(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

գտնվող տնկարանի \_\_\_\_\_ հեկտար տարածքում, հավաստագրում անցկացնելու վերաբերյալ հայտը

«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ  
առևտրային կազմակերպությունը որոշում է ընդունում՝ \_\_\_\_\_

(1. անցկացնել հավաստագրում, կամ 2. մերժել)

1. \_\_\_\_\_  
(որոշելու համար համապատասխանությունը (նորմատիվային փաստաթղթերի անվանումը) պահանջներին)

2. \_\_\_\_\_  
(ձևակերպել մերժման պատճառը)

\_\_\_\_\_ (ձևակերպել մերժման պատճառը)

Ձեր կողմից ներկայացված \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը, տրոտը, պատվաստակալը)

կարգի \_\_\_\_\_ -տնկանյութի խմբաքանակի հաշվառման համարն է \_\_\_\_\_ :

«Գյուղատնտեսական հետազոտությունների  
և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը ազգանունը)

**Ձև N 3**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N \_\_**

**ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Դաշտային հետազոտող \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, վկայագրի N)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ էլ՝ փոստի հասցե \_\_\_\_\_

Տեղեկացվում է, որ \_\_\_\_\_  
(տնկարանային տարածքի գտնվելու վայրը՝ քաղաք, գյուղ, մարզ, փողոց)

\_\_\_\_\_ հեկտար \_\_\_\_\_  
(մակերեսը) (մշակաբույսի անվանումը) (տրոտ, հիբրիդ)

\_\_\_\_\_ տնկարանային տարածքում իրականացվել է դաշտային  
(տնկարանային արտադրության հերթագայությունը)  
հետազոտություն՝ բույսի վեգետացիայի ընթացքում աճի և զարգացման \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ փուլ(եր)ում:

Տնկարանային տարածքի հակիրճ բնութագիրը \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Դաշտային հետազոտող՝ \_\_\_\_\_



Դաշտային հետազոտողի որոշումը և առաջարկությունները \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հայտատու՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Ապրոքատոր՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

**Ձև N 5**

**Ա Վ Տ Ն \_ \_**

**ՀԱՏԱՊՏՂԱՏՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ**

«\_ \_» \_\_\_\_\_ 20\_ \_ թ|  
օր ամիս տարի

Ապրոքատոր \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, վկայագրի N)

\_\_\_\_\_ ներկայությամբ  
(հայտատուի անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

կատարեց \_\_\_\_\_ գտնվող  
(ՀՀ մարզ, համայնք, բնակավայր)  
հատապտղատու տեսակների տնկանյութի դաշտային հետազոտություն:

**Դաշտային հետազոտության արդյունքները**

Տնկարանում աճեցվող հատապտղատու տեսակները \_\_\_\_\_ քանակով:

Մշակաբույսը	Մորտը	Տարածքը (հեկտար)	Ելանյութի ծագումը և կենսաբանական դասը	Ընդամենը քանակը (հազար հատ)
1	2	3	4	5

Դաշտային հետազոտողի որոշումը և առաջարկությունները \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հայտատու՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Ապրոքատոր՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

**Ձև N 6**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Ն \_ \_**

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՄԱՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ

« \_ » \_ \_ \_ \_ 20\_ \_ թ|  
օր ամիս տարի

Դաշտային հետազոտող \_ \_ \_ \_ \_  
(անուն, ազգանուն, վկայագրի N)

\_ \_ \_ \_ \_ ներկայությամբ  
(հայտատուի անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

կատարեց \_ \_ \_ \_ \_ գտնվող  
(ՀՀ մարզ, համայնք, բնակավայր)

\_ \_ \_ \_ \_ կարգի  
(մշակաբույսի անվանումը) (տրոս, պատվաստակալ)

տնկարկների բուսասանիտարական հետազոտություն:

Ընդամենը հետազոտված բույսերի քանակը (հատ)	Վիրուսային, վիրուսանման հիվանդությունների ախտանիշներով բույսերի քանակը (հատ)	Այլ վտանգավոր հիվանդությունների ախտանիշներով բույսերի քանակը (հատ)
1	2	3

Վիրուսային և վիրուսանման հիվանդություններով վարակվածությունը \_ \_ \_ %

Այլ վտանգավոր հիվանդություններով վարակվածությունը \_ \_ \_ %

Վնասվածությունը վնասատուներով \_ \_ \_ %

Վարակաբանության լաբորատորիայի ներկայացուցչի որոշումը \_ \_ \_ \_ \_

\_ \_ \_ \_ \_  
\_ \_ \_ \_ \_  
\_ \_ \_ \_ \_

Հայտատու՝ \_ \_ \_ \_ \_  
(ստորագրություն)

Դաշտային հետազոտող՝ \_ \_ \_ \_ \_  
(ստորագրություն)

Ձև N 7

ՀԱՅՏ N \_ \_

ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« \_ » \_ \_ \_ \_ 20\_ \_ թ|  
օր ամիս տարի

Հայտատու \_ \_ \_ \_ \_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_ \_ \_ \_ \_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_ \_ \_ \_ \_ Էլ| փոստի հասցե \_ \_ \_ \_ \_

Խնդրում եմ \_ \_ \_ \_ \_  
(մշակաբույսի անվանումը) (տրոս, պատվաստակալ)

\_\_\_\_\_ կարգի տնկանյութի ----- հատ խմբաքանակից իրականացնել նմուշառում, գնահատում (անհրաժեշտության դեպքում՝ լաբորատոր փորձաքննություն):

Հայտատու՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ. \_\_\_\_\_

Լրացվում է «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակցի կողմից:

- 1. Հայտի գրանցման ամսաթիվ՝ \_\_\_\_\_ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թվ
- 2. Մուտքի ծածկագիրը՝ \_\_\_\_\_ N \_\_\_\_\_
- 3. Փաստաթղթերի ստացականը կազմվել և հանձնվել է՝ \_\_\_\_\_ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թվ

Հավաստագրող մարմնի պատասխանատու՝ \_\_\_\_\_  
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

**Ձև N 8**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Ն \_ \_**

**ՀԱՅՏ Ն \_ \_ - Ի ՓՈՐՉԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- |                        | <b>Չափը</b>                                    | <b>Վիճակը</b>                                  |
|------------------------|--|--|
| 1. Արմատային համակարգ՝ | <input type="checkbox"/> Թերզարգացած           | <input type="checkbox"/> Թերզարգացած           |
|                        | <input type="checkbox"/> Միջին զարգացվածության | <input type="checkbox"/> Միջին զարգացվածության |
|                        | <input type="checkbox"/> Չարգացած              | <input type="checkbox"/> Չարգացած              |

- |                       | <b>Չափը</b>                                    | <b>Վիճակը</b>                                  |
|-----------------------|--|--|
| 2. Վերգետնյա զանգված՝ | <input type="checkbox"/> Թերզարգացած           | <input type="checkbox"/> Թերզարգացած           |
|                       | <input type="checkbox"/> Միջին զարգացվածության | <input type="checkbox"/> Միջին զարգացվածության |
|                       | <input type="checkbox"/> Չարգացած              | <input type="checkbox"/> Չարգացած              |

3. Վնասատուներ՝  Առկա են  Բացակայում են  
*Եթե առկա են, ապա ինչպիսիք* \_\_\_\_\_

4. Հիվանդություններ՝  Առկա են  Բացակայում են  
*Եթե առկա են, ապա ինչ* \_\_\_\_\_

5. Կարանտին օբյեկտներ՝  Առկա են  Բացակայում են  
*Եթե առկա են, ապա ինչ* \_\_\_\_\_

6. Մեխանիկական վնասվածքներ՝  Առկա են  Բացակայում են

7. Այլ մեկնաբանություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

«Գյուղատնտեսական հետազոտությունների  
և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը ազգանունը)

**Ձև N 9**

**Հ Ա Յ Տ Ն \_ \_**

**ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_ Հեռախոս \_\_\_\_\_ Էլ-փոստ \_\_\_\_\_  
(քաղաք, գյուղ, մարզ, փողոց, տուն) (ֆորմատը՝ 0xx xxx xxx)

Խնդրում եմ \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը) (տրտ, պատվաստակալ)

\_\_\_\_\_ կարգի տնկանյութի \_\_\_\_\_ հատ խմբաքանակին տրամադրել հավաստագիր:

Հավաստագրման ներկայացվող տնկանյութի հավաքման տարին \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ :

Հայտատու՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ. \_\_\_\_\_

*Լրացվում է «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային  
կազմակերպության աշխատակցի կողմից:*

- 1. Հայտի գրանցման ամսաթիվ՝ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|
- 2. Մուտքի ծածկագիրը՝ N \_\_\_\_\_
- 3. Փաստաթղթերի ստացականը կազմվել և հանձնվել է՝ «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|

Հավաստագրող մարմնի պատասխանատու՝ \_\_\_\_\_  
(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

**Ձև N 10**

**Հ Ա Յ Տ Ն \_ \_**

**ՊՏՂԱՏՈՒ ԿԱՍ ՀԱՏԱՊՏՂԱՏՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՊԻՏԱԿՆԵՐ ՁԵՌՔ  
ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ|  
օր ամիս տարի

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

Հասցե \_\_\_\_\_  
(ՀՀ մարզը, համայնքը, բնակավայրը)

Հեռախոսահամար \_\_\_\_\_ Էլ| փոստի հասցե \_\_\_\_\_

Խնդրում է տրամադրել \_\_\_\_\_  
(մշակաբույսի անվանումը) (տորտ, պատվաստակալ)

կարգի տնկանյութի \_\_\_\_\_ N \_\_\_\_\_ խմբաքանակի  
(հասակը, սորտը)

\_\_\_\_\_ պիտակներ \_\_\_\_\_  
(քանակը, հատ) (թիվը, տեսակը, պիտակների համարները)

Հայտատու՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար**

**Ա. Հարությունյան**

16.02.2024  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված N 3**  
**ՀՀ կառավարության 2024 թվականի**  
**փետրվարի 15-ի N 226-Ն որոշման**

**Ց Ա Ն Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱԿՈՒՅՑՈՒՄ ԴԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

**1| Հացահատիկային մշակաբույսեր**

- 1. Յորեն
- 2. Գարի
- 3. Աշորա
- 4. Տրիտիկալե
- 5. Հաճար
- 6. Վարսակ
- 7. Եզիպտացորեն
- 8. Հնդկացորեն
- 9. Սորգո հատիկային
- 10. Սորգո շաքարային
- 11. Կորեկ

**2| Հատիկաընդեղենային մշակաբույսեր**

- 12. 10| Լոբի
- 13| Ոլոռ
- 14| Ոսպ
- 15| Սիսեռ
- 16| Սոյա
- 17| Բակլա

**3| Պալարապտղային մշակաբույսեր**

- 18| Կարտոֆիլ
- 19| Գետնախինձոր

**4| Արմատապտղային մշակաբույսեր**

20| Գագար

21| Ճակնդեղ սեղանի

22| Ստեպոլին

23| Բողկ

**5| Կաղամբային մշակաբույսեր**

24| Գլուխ կաղամբ

25| Բրյուսեյան կաղամբ

26| Սավոյան կաղամբ

27| Ծաղկակաղամբ

28| Բրոկկոլի

29. Կոլրաբի

**6| Պտղաբանջարային մշակաբույսեր**

30| Լոլիկ

31| Վարունգ

32| Տաքդեղ

33| Սմբուկ

34| Հակոբուկ

35| Դդմիկ

36| Դդմակ

37| Բամիա

**7| Բոստանային մշակաբույսեր**

38| Դդում

39| Ձմերուկ

40| Սեխ

**8| Համեմունքային կանաչեղեն**

41| Մաղադանոս

42| Ռեհան

43. Սամիթ

44| Համեմ

45| Կոստեմ

46| Դաղձ (անանուխ)

47| Նեխուր

**9| Տերևային մշակաբույսեր**

48| Հագար

49| Սպանախ

**10| Սոխուկավոր մշակաբույսեր**

50| Սոխ

51| Պրասասոխ

52| Սխտոր

**11| Ցողունաբանջարային մշակաբույսեր**

53| Ծներեկ

54| Թարխուն

**12| Ծաղկային մշակաբույսեր**

55| Վարդ

56| Վարդակակաչ

57| Նարգես

58| Հակինթ

59| Հերբերա

60| Մեխակ

61| Լիզիանտոս

62| Ալատրոմերիա

**13| Կերային մշակաբույսեր**

63| Երեքնուկ

64| Երեքնուկ պարսկական կամ միամյա

65| Լյուպին

66| Վիկ

67| Առվույտ

68| Կորնզան

- 69| Մորզոն
- 70| Բարձր ռայզրաս
- 71| Շյուղախոտ
- 72| Ոզնախոտ
- 73| Սեզ
- 74| Սիզախոտ
- 75| Գոնգեղ
- 76| Շաղգամ
- 77| Ճակնդեղ կերային
  - 14| Տեխնիկական մշակաբույսեր**
- 78| Խորդենի
- 79| Ծխախոտ
- 80| Արևածաղիկ
- 81| Կտավատ
- 82| Հլածուկ
- 83. Գետնանուշ
- 84. Բամբակենի
- 85| Քունջութ
- 86| Կանեփ տեխնիկական
  - 15| Խաղող**
  - 16| Հնդավորներ**
- 87| Խնձորենի
- 88| Տանձենի
- 89| Սերկևիլենի
  - 17| Կորիզավորներ**
- 90| Բալենի
- 91. Կեռասենի
- 92. Ծիրանենի
- 93. Դեղձենի
- 94. Նեկտարենի
- 95| Սալորենի
- 96| Շլորենի
- 97| Հոնենի
- 98| Ջիթենի
  - 18| Ընկուզավորներ**
- 99| Ընկուզենի
- 100| Նշենի
- 101| Պիստակենի
  - 19| Չոր մերձարևադարձայիններ**
- 102| Թզենի
- 103| Ժորենի (արևելյան խուրմա)
- 104| Նոնենի
- 105| Շողպարենի (կիվի)
  - 20| Հատապտղատուներ**
- 106. Ելակենի
- 107. Հաղարջենի
- 108. Կոկոռչենի
- 109. Հապալասենի
- 110. Մորենի (ազնվամորենի)
- 111. Մոշենի
- 112| Գետնանեղակ

Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար

Ա. Հարությունյան

16.02.2024  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 19 փետրվարի 2024 թվական:**